# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 16

## ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

01.07.2019թ. ք.Վանաձոր

Մասնակցում էին

Գ.Մարկոսյանը - մարզպետի տեղակալ

Վ.Խաչատրյանը - գլխավոր քարտուղարի պաշտոնակատար

Ա.Բեջանյանը, Ա.Մխիթարյանը, Ռ.Հարությունյանը, Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Ա.Շահվերդյանը, Ա.Օհանյանը, Գ.Բաղդասարյանը, Ս.Ղուբաթյանը, Ա.Գասպարյանը, Ա.Բաղդասարյանը, Լ.Բերոյանը, Ն.Համբարձումյանը, Ա.Ադլոյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Լ.Ասլանյանը - մարզպետի խորհրդական

Ռ.Խանզադյանը - մարզպետի օգնական

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

1.Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների ամփոփում

/Գ. Մարկոսյան, Վ. Խաչատրյան, ստորաբաժանումների ղեկավարներ/

2. Մարզպետարանի ստորաբաժանումների առաջիկա շաբաթվա ընթացքում կատարվելիք աշխատանքների մասին

/Ա.Ղուկասյան/

3. Այլ հարցեր

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց՝

1. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա.Ջանազյանին՝

ա) Սեփական եկամուտների ցածր հավաքագրում ունեցող համայնքների ղեկավարներին տեղեկացնել համայնքների ներդրումային ծրագրերի իրականացման հնարավորության վերաբերյալ այն պարագայում, երբ ապահովվի սեփական եկամուտների հավաքագրման անհրաժեշտ մակարդակ:

բ) 10-օրյա ժամկետում ուսումնասիրել և ներկայացնել տեղեկատվություն Դսեղ և Սվեդլով համայնքների ջրամատակարարման համակարգերի վերաբերյալ:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին՝

Անհրաժեշտ աջակցություն ցուցաբերել նորընտիր համայնքների ղեկավարներին իրենց գործառույթների իրականացման նպատակով:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա.Օհանյանին՝

**ա) Անհրաժեշտ հսկողություն սահմանել ԱԳԼՃԿ-ների այն սեփականատերերին պատասխանատվության ենթարկելու գործառույթի նկատմամբ, որքեր դեռևս չեն իրականացրել օրենսդրության պահանջներին համապատասխան շինարարական աշխատանքներ:**

**բ) Մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն Վանաձորի «Արցախ» պուրակի, ինչպես նաև գազաբալոնային արտադրությամբ զբաղվող ձեռնարկությանը անհրաժեշտ հողատարածք տրամադրելու վերաբերյալ:**

Invalid signature

X

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

Արծ.Ս. Մակարյան

Հեռ. 0322 /4-32-99/